



ՎԵՐԱԴԱՐՈՒՄ

Քեզի կուգամ, յոգնած, տեսում,
Պանդուխտն ինչպէս կը գառնայ տուն,
Կրակներով սիրտն իր լեցուն,
Եւ կամ տղան՝ որ մութին մէջ սարսափահար,
Կը կարկառէ քեներն իր մօր:

Մազլցեր եմ տարիներով, լեռներէն վեր,
Հսպասելով միշտ որ բացուի
Երկինքն ամբողջ գլխուս վերել:
Կեանքի գինին աւազներու ծոցն է քափեր,
Դուն միայն, ու չափ կենդանի,
Կրնաս քաղցն իմ յաղթահարել:

Գիշերիդ մէջ նուիրական, ուր կը շողայ
Մերկասեսիլ նեմատեսութեան փայլակն արդար,
Թող խաղաղին ու քաղցրանան
Վիշերս հազար,
Ողկոյզն ինչպէս կամարին տակ
Որքատունկին:

Տեսեր եմ ես դէմքը վիշին,
Տառապանքէն աչքերս բաժակ արիւնածոր,
Հոգիս կաթիլ մը արցունքի,
Բոց մը ինչպէս գիշերուան խոր:

Կ'ուզեմ բացուիլ,
Օրերուն ալս նորահանդէս,
Զատուիլ մահէն
Ու բաժնել մահը մահուան հետ,
Եթէ կաթիլ էութենէդ հոգիս խոր,
Կաթիլ մը նոր:

Վ.ՏԱՐՍՆԴԻ